ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1295-Ա « 31 » հոկտեմբերի 2025թ.

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 146-րդ կետի պահանջները՝ Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի հարակից տարածքի հիմնանորոգման աշխատանքները շահագործման ընդունելու նպատակով.

1. Ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Տ. Դարբինյան - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/

Ս. Դադայան - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության ճանապարհների միջին նորոգման և հիմնանորոգման ծրագրի պատասխանատու ինժեներ

«ԱԴՐԻՆՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ռ.Պետրոսյան - Կապալառու կազմակերպություն

«ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն Ս.Կոշտոյան - Տեխնիկական հսկողություն իրականացնող

«ՁԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Մարտիրոսյան - Հեղինակային հսկողություն իրականացնող

2. Հանձնաժողովին՝ ստուգել կատարված աշխատանքների համապատասխանությունը հաստատված նախագծին, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին ու ստանդարտներին և կազմել աշխատանքների հանձնման – ընդունման ակտ:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի վրա:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ